



88. ԼՈՒՎՈԹՈՒՆԸ ՄԻԾ ԿԸՄՍԱ

Մին թաքավը երու բաղին մաշին ծառան ճոժկը քցած ա իլալ.
խոյան մաշին նի կապած: Էտ ճոժկեն մաշին միշտ խոխա յար ի-
նձնիմ, շոնն էլ լիրան զարազուլ ընելիս: Շանը լավ եշում ին, լավ
պահում, հենց վըեր մժանում ա, թակում ըն տըեն անում:

Շոնը կլիխ ա յոր օնում, քյինամ: Քյինամ ա, քյինամ, մին
ծմակում կյանվին պտահում: Կյանվը հրցընում ա, թա էտ հի՞նչ ա
հալըտ, էտ խե տի՞ յըս, ասե տըենամ՝ քեզ հի՞նչ ա պըտահալ:
Շոնը կլիխը եկածը ամմեն հինչ նազլ ա անում: Կյանվն ասում
ա.—Ես քու ըովբհաթըտ պիցըըըննական ըմ: Մոլըհաթ ըն ա-
նում, վըեր շոնը ճոժկան մոտեն մին քոլու տակե կյողը կինա,
կյանվը քյինա խոխան կյուղանա, շոնն էլ քոլեն տական տէնս
կյա, ըսկս հաշի, կյանվը խոխան վըեր քցի, փախնի: Տի յէլ անում
ըն:

Վըեր կյանվը խոխան կյուղանում ա, հղե ինձնիմ, շոնն էլ քոլեն
տական տէնս ա կյամ ըսկսում հաշիլը, կյանվը խոխան թողում ա,
փախնում: Թաքավը երեն մարթիքը սաղ հըվաքվում ըն, շանը
փոնոսի ըսկսում պըշպըշորելը, թա մունք քու զադիքըտ գլիդա-
սալ ըընք, քեզ կըլիքներես յիրա յընք պըհըլական: Տրանա ետը
էլլա ըսկսում ըն առաջվա մնան շանը լավ պահելը: